



## ՀՐԴԵՀ ԳԻՇԵՐ

**Պ**ահեմն ի բուն, զարհուրելի հըրդեհն աւեր զարծրեց գիւղ,  
Բողը հազար թեւեր կազմած զըրկեց, պըրկեց ամէն մի հիւզ.  
Մարդեր թողին սարափահար՝ հալաւ, ինչքեր, տուն ու տանիք,  
Մարագներում մըրոնչեցին պարանակապ ինեղ կենդանիք:

Գիշերապահ շըներն ամէն կողմից թողին ոռնոց, կաղկանձ.  
Մայրեր փախան՝ կըրծցին սեղմած տըկւր լամեր իրը անզին գանձ,  
Ումանց թեւից քարը տունցին փորքիկ մանկանց ըընաթաթախ.  
Հալոր, պառաւ բազում անձեր բոցերի մէջ եղան մատաղ:

Առաստաղներ տեղի տրւին, ճարճատեցին հող ու գերան,  
Թանձր ծուխը դէպ՝ դորս պոռկիաց բաց դըռներից հընոցքերան.  
Եւ կատաղի սոյլը հովին իրար խառնեց արցունց ու ճիչ,  
Հաւ ու ացլոր, հորթ ու զառնուկ մեռան, կորան, չի մընաց ինչ:

Մարուեց պարզապաշն էլ աստղերին, ըըստմած մընաց գէմըը լուսնին.  
Խնչ որ զարեր հարկ էր եղած որմաշնին, ճարտար հիւնին՝  
Մի գիշերում լափեց հուրը՝ ամենազօր երկնի տարերց,  
Փոշի, մոխիր քամին տարաւ, զիւզը զարձաւ գեհն անմերձ:

Ժամեր անցան, ամէն էակ զրտաւ իրա մի ապաստան,  
Մինչեւ դարձեալ լոյսը երկրին համբոյը տըւեց կենդանութեան.  
Յօղը ծածկեց դեռ հեծող զիւզն, թարմ շունչ տըւեց զաշտ, մարգերուն  
Ոչ որ չի կար շուրջը յածող, ամէնըն էին փախած հեռուն:

Եըրջակայից օգնել եկող շատ կըրիմներ՝ ուսն հըրացան,  
Արկածեալի հետք փընտոելով խումբ - խումբ եղան եւ հեռացան.  
Հասան այստեղ ուր զաշտի մէջ երկարում է մի հըրուանդան  
Անտառապատ, վըսեմաշուր եւ թեքւում է լայն պողոտան:

Ոլորպատոյա զով վըտակը գըլզըլաւով հոսում էր վար,  
Եւ թարմ խոտեր, ջըրաշուշան ափին կազմած էին կամար.  
Խսկ նորածագ արքին իրա շողերն ուղղած վընիտ ակին,  
Ասես, վերը, աղամանդէ մի աչք ձօնած էր բըլըակին:

Հետափոյզներն ըգմայլիցան, ելան դէպի դարաստանն հարթ Ար զես հազիւ զարթած էին յասմիկ, շուշան և մըրտավարդ. Յանկապատում թոյլ ճըռողում էին հաւըերն էլ սիրատարփ՝ Առաւտեան սիրից մըրսած թեւեր, զըլուխ տալով թափթափ:

Ոչ մի շըշուկ էլ չի լըսուեց, մի հըմայքի եղան գերի, Բոլոր մարդոց աչքեր դարձան դէպի վըսեմ մի պատկերի... Մի թաւամազ զամիռ ահարկու որի աչքից կըրակ ցայտէր, Կըծկած՝ պահէր թաթերի մէջ մի լուսնադէմ մանկան այտեր:

Մի թաթն իրբեւ բարձ էր պարզած, հովին դէմ էր տրւած իր դունչ, Տաքացնելով քընքուշ մանկան որ խաղաղիկ քաշում էր շունչ.

Չէր մըրմըռում, չէր խոժոռում որ ահաւոր զիշերից ետք Հանգիստ առնէր անզին տիրոջ՝ բոցից պըրծած երախան հէք...

Բարիզ

ՀԱՅԿ-ԱՐԱՄ

## Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ռ Ո Վ Ա Լ



Հայրենի ծով, արիւնի ծով մոնչող. քու վրէժիդ սև ալիքները կը լսեմ ահա որ կը ծեծեն Պանսոսի սեպ կողերը:

Ծեծէ՛, ծեծէ՛, ժայռերէն վեր սլացիր, թող աշխարհը սասանի ձայնիդ իրոխտ շառաչէն. թէ և ան խուլ՝ բայց դուն մի՛ ըլլար համր զո՞ն:

Հայրենի ծով, անմեղութեան օրօրան. քու անայլայլ ծոցին մէջ կը տեսնեմ աւ հա քոյրերս մերկավիզ և անսամբնը, ու մանկիներ ու մայրեր որ դէպի ինձ կը ձգուին:

Յուզուէ՛, յուզուէ՛, քու ծոց տունն է ցեղիս անխօս վրէժին. յուզուէ՛, թող վէս Միհրդաս խոռվի ու Տիգրան իր անվկանդ բազուկները զրահէ:

Հայրենի ծով, նոր աշխարհի դու դըմիս, շարժէ՛ ալիքներդ ամեհի, թող անոնք ջրվէժ դառնան ցեղի կարմիր հեղին ու տիեզերն ողողեն, ինչ փոյթ

մարդոց տառապանքն, երբ դուն վիշտն ես Աստուծոյ և ամօթի սև խարանը մարդ-կութեան:

Հայրենի ծով, իմ կարօտից ցանկութիւն. Կաթիլ մ'արին, շիթ մը արցոննը զիը աչքերու ակին մէջ. թող անոնք իրեն վրէժ քարանան ու թարթիշներս իր սլաց-ները զառնան:

Հայրենի ծով, արցոննը ծով մշտա-յոյզ. խօսէ՛, խօսէ՛, թող դողդողայ տիե-զերը որ դու անյազ վիշն եղար ցեղի անզուսպ հանճարին, և տէր նեպոն իր զահէն թո՞ն օրհնէ քեզ փրփրադէզ:

Հայրենի ծով, հայրենի ծով սեայօն. դուն որ մահը եղար քեզ յար պաշտողին, եղիր և կեանըը անոր, զի մեծ է այն որ կը բանդ ու կը շինէ ինչպէս արարիչ մը հզօր:

Մարտի, 1917

Թ. ԵԳԻՒՆԵ